

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

### ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

304. ՆԻԻԹԸ. — Որպէսզի ա՛լ աւելի յատկուի խորհուրդներուն իսկութիւնը, արժան է որ անոր տարրերն ալ ներկայացնենք, լրացնելու համար Եկեղեցւոյ վարդապետութեան ցուցմունքները անոնց մասին: Այդ խորհուրդին տարրերն են, ա. Նիւթը, որովհետեւ էական է զգալի նշան մը, և զգալին պէտք է լինի նիւթական, և այն՝ ոչ նորահաշ նիւթ մը, ի նորոյ ստեղծագործութեամբ, այլ որ առնուած ըլլալ մարդոց բնական եղած իրերուն մէջէն, և մարդուն մերձաւորագոյն բան մը իրաց սովորական կարգէն: Բ. Զեւը, որովհետեւ Նիւթը անորոշ է իր բնութեան մէջ և կրնայ ուղղուած ըլլալ տարբեր տարբեր գործերու և նպատակներու, և պէտք է որ՝ այդ մասնաւոր պարագային մէջ՝ հասկցուի թէ ինչի՞ ուղղուած է կամ ի՛նչ բանի համար կը

կատարուի: Այդ որոշուիլը կախուած է անոր մասին եղած մտադրութենէն, ու մտադրութիւնը ներքին բան մը լինելով՝ զգալի ըլլալու համար պէտք է յայտնի բանիւ բերանոյ: Անոյ այդ խոսքերն են որ կ'արտաբանուին նիւթին գրուած տառերը, և կը ցուցնեն անոր մասնաւորեալ կիրառութիւնը, և այդ պատճառաւ կը կոչուին ձեւ: Գ. Պաշտօնեայն, որովհետեւ Գրիստոսէ հաստատուած դրական նշան մըն է, այս պատճառաւ պէտք է միտնալու մայն որ ցուցուի նաեւ այն անձը՝ որուն արտօնութիւն է տրուած կատարելու սահմանեալ նշանը: Դ. Ենթական, Բոլոր դրական գործերը այլեւազաւ չեն, և ոչ իսկ բնական կարգով կամ օրէնքով ի դէպ է որոշել թէ ո՛վ է որ պիտի առայ և ո՛վ է որ պիտի ընդունի: Ուստի, ինչպէս խորհուրդին պաշտօնեայն, նոյնպէս և ենթական պէտք է սահմանուի հաստատողին կամքին համեմատ:

305. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ. — Գլխաւոր տարրերէն, յայտնին նիւթէն, ձեւէն, պաշտօնեայն և առարկայէն յետոյ կու գան երկրորդական տարրերը, որոնք կ'որոշեն խորհրդական գործին արտաքին

յաւէտ, և մշտավառ մնան հայ մշակոյթի ջանքն ու հայրենի աւանդութեանց առկայծ լապտերը հայտաճարին, դպրոցին և տան: Ասոր համար ալ մեր լուսաւորիչներու, Ս. Գրիգորի, Ստեփանի, Մեսրոպի և անոնց բոլոր գործակիցներուն օրինակն ու կոտակը, նպատակն ու յաջողութիւնը խրախոյս պէտք է լինի մօէնդու:

Աչքի առջև ունենալով այս մօէնքը, ինչպէ՛ս կրնանք չհետեիլ Տիրոջ սա պատուէրին:

ԱՄԻՆՂԵԱ զլոյսն ընդ ձեզ ունիք, հաւատացե՛ք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիցիք (Յովհ. ԺԲ. 36):

Էլոյս ի լուսոյ:

Կենդանի հաւատքը գործքով կը պլաս-  
շարբերի:

Պօստ, Նիւ Եօր

Եւ որքա՛ն շատ են ու սուրբ այն գործերը, որոնց կատարումը զմեզ լոյս և լուսոյ որդիներ կը դարձնէ:

Հա՛յ Գրիստոնեաներ, պիտի մոռնո՞ք կեանքն ու գործը լուսաւորիչներուն: Պիտի չյիշէ՞ք և չարդարացնէ՞ք ձեր քրիստոնէական կոչումը:

Ե՛րուք ե՛ք լոյս աշխարհի:

Պիտի չվառի՞ք գիտութեամբն ու հաւատքովը լուսաւորիչներուն: Վառ պիտի չպահէ՞ք ազգին լոյսը, որ հայ մշակոյթն է, կրօնքն ու լեզուէն, գիրն ու արուեստները, մօէնքն ալ ճառագայթումները (կախարհի Լոյսին, որ Լոյսն է Հայաստանի, Լոյսը Հայ Ազգի):

Էլոյս ի լուսոյ:

ԶԳՕՆ ԵՊԱ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

և մասնաւոր հանգամանքները, ուսկից պէտք է յառաջ գայ շնորհաց արդիւնքը: Աստուծո՛ւ են, տեղը՝ ուր պէտք է կատարել, ժամանակը՝ ուր արժան է ընել, գործիքները և հանդերձանքը՝ զորս ի դէպ է ի կիր տռնել, զարդերը և ճոխութիւնները՝ զորս յարմար է աւելցնել, աղօթքն ու երգը՝ որոնցմով պէտք է ոգևորել գործը, ակնկիցները և գործակիցները՝ որոնք պիտի ընկերասնան պաշտօնեային, և ուսոնց նման բողջմովի ռարիշ հանգամանքներ և մանրամասնութիւններ, զորս ընդհանուր կերպով կ'իմանանք ծէսք և արարողութիւնք տնտեսի տակ, որոնք թէև փոփոխական և պատահական են իբր մասնաւոր և իբր թանկարացներ, բայց հաստատուն և հարկաւոր են ընդհանուրն և վերացարար, զի անհնար է զգալի գործը բոլորովին մերկացնել այդ բոլոր մանրամասնեալ պայմաններէն:

306. Հեռնաւոր ԵՒ Մերձաւոր. — Մեր յիշած այդ տարրերը առձեռն ունենալնէս վերջ ալ, տակաւին չեն լրանար խորհուրդներուն ժապին եղած բոլոր խնդիրները: Որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրին՝ հեռաւորներուն ետէն կու գան մերձաւորները, Հեռաւորներն են նիւթը, ձեւը և այլն, երբ իրենց ըստ ինքեան գոյութեան և տեսական ստուգութեան մէջ կը նկատուին, իսկ մերձաւոր են՝ երբ իւրապէս ի գործ կը դրուին և ի կիր կ'առնուին: Այսպէս հեռաւոր նիւթ կը կոչինք ջուրը ըստ ինքեան՝ Մկրտաւթեան խորհուրդին համար, և մերձաւոր նիւթ՝ այն ջուրը զոր իրօք աւաղանին մէջ կը դնենք՝ Մկրտութիւնը կատարած ատենիս, Հեռաւորին և մերձաւորին այս տարբերութիւնը յառաջ կը բերէ խորհուրդներու մատակարարութեան տարբերեալ վիճակներ, զորս կարող ենք վերածել երեքի, վաւերական, օրինաւոր և արժանաւոր: Ամէն մարդկային գործ, ուր կը մտնէ հոգեբանական վիճակ, իսկապէս այդ հանգամանքն ունի, որ է ընել, կրնալ ըլլալ վաւեր, այսինքն բաւական՝ լրացնելու նպատակին պահանջը կամ ոչ: Եթէ ունի նպատակին բոլոր պահանջած հանգամանքները և կը հասնի նպատակին, կը

կոչուի վաւերական, իսկ եթէ թերի են նպատակին կատարութիւն համար պահանջուած հանգամանքները, գործը անվաւեր կը համարուի: Բայց վաւերականութիւնը իրեն հետ անպատճառ չի բերեր օրինաւորութիւն, որ է կատարելութիւն, ոչ միայն էական պայմաններու այլ նաեւ բոլոր օրինաւորեալ կարգերու, որոնք երբ թերի ըլլան, թերի կ'ըլլայ օրինաւորութիւնն ալ: Եթէ օրինաւորութիւնը ըլլա՞յ իսկ՝ հնար է որ միեւնոյն ատեն չըլլա՞յ նաեւ յարմարութիւնը բարոյական հանգամանքներու և պաշտօնէին կամ ենթակային ներքին պատրաստութեանց, ու այս տեսակէտով եղած թերութիւնը թերի կը թողու նաեւ օրինաւորութիւնը: Ըստ այսմ ամէն գործի մէջ էական պայմանները յառաջ կը բերեն վաւերականութիւն, բովանդակ պայմանները՝ օրինաւորութիւն, իսկ գործողներու պայմանները՝ արժանաւորութիւն:

307. ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ. — Բազմադիմի կերպերը, որոնցմով սովոր ենք նայելու Եկեղեցւոյ վերաբերեալ խնդիրներուն, կարծես բնական կարգով մը առիթներ ընծայեցին բաժանում մը ընկու խորհուրդներուն վերաբերեալ խընդիրներուն մէջ ալ, ու աստուածաբանութեան զանազան ճիւղերը, անոնցմէ իւրաքանչիւրը իրեն սեփական մասը առաւել Տեսական Աստուածաբանութիւնը բաւական կը համարի բացատրել միայն էութիւնը և իսկութիւնը խորհուրդներուն, իբրեւ դաւանութիւն, մինչ բարոյական տառուածաբանութիւնը կը խօսի լոկ այն հանգամանքներուն վրայ, որոնցմով պէտք է պաշտել և մատակարարել խորհուրդները ոչ միայն վաւերաբար այլև օրինաւորաբար և արժանաւորաբար: Եկեղեցւոյ կան իրաւագիտութիւնը կը զբաղի միայն ցուցնելով պաշտօնէից և ենթականերուն իրաւունքները խորհուրդներուն վրայ՝ կամ անոնք մասին, իսկ եկեղեցական ծիսագիտութիւնը կ'աւանդէ ձեւերը և արժանաբար արարողութիւնները զորս հարկէ պահանջ ըստ ռովորութեան կամ կարգաւորութեան Եկեղեցւոյ: Թէև ըստ այսմ մեր գործը պիտի ըլլար միայն դաւանա-

կանը աւանդել՝ իբրեւ մասն Տեսական Աստուածաբանութեան, բայց թէ՛ հասկացողութիւնը գիւրացնելու և թէ՛ նիւթը ամփոփած ըլլալու համար՝ իւրաքանչիւր խորհուրդի առթիւ պիտի աւելցնենք բարոյական, կանոնական և ծիսական կէտերն ալ, աւելի կամ նուազ ընդարձակօրէն, ըստ կարեւորութեան խնդրոց:

### 308. ՄԱՍՆԱԽՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ. —

Ամենէն բանաւոր կերպն է անուշապաւնել մասանց կարգը, և մէն մի խորհուրդի ճշմարտութիւնը կամ գոյութիւնը ցուցնելէ վերջ, մի առ մի բացատրել անոր նիւթը, ձեւը, պայտօնեան, ենթական և ծէսը, և լուծել այն խնդիրները, որոնք ժամանակ ժամանակ յուզուած են իւրաքանչիւր խորհուրդի շուրջ և անոր տարբերուն մասին: Բայց մէն մի խորհուրդի անցնելէ առաջ, հարկ կը դառնած յընդհանուրն ցուցնել նախ խորհուրդներուն գոյութիւնը և թիւը, և վերեւ յիշուած տարբերուն էական հանգամանքները իրենց ընդհանուր առումին մէջ:

### 309. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՅ. —

Խորհուրդներուն գոյութիւնը ընդհանրապէս՝ երբեք նիւթ չէ եղած հակառակութեանց, որովհետեւ բաւական էր մի միակ խորհուրդի մը ճշմարտութիւնը՝ որպէսզի խորհուրդներուն գոյութիւնը ճշմարիտ լինէր ըստ ինքեան: Իսկ քրիստոնէութեան մէջ չգտնուեցաւ մէկը, որ գոնէ միայն մէկ խորհուրդը չընդունէր, որով խորհուրդներուն գոյութիւնը իբր ընդհանրութեանը մէջ կը նկատուի իբրեւ ամէնքէն խոստովանուած ճշմարտութեան մը և հետեւաբար իբրեւ ըստ ինքեան ապացուցուած ճշմարտութիւն, եթէ եղան հակառակութիւններ, անոնք յածեցան միայն խորհուրդներուն գործութեան վրայ, պարիքն թէ ինչ է անոց արդիւնքը: Եթէ չնորքները իրապէս իրենց պատահաները բռնէին, թէ զգացմանց գրգռանքն են լոկ, թէ արգաթեւ Շնորհաց արւելութիւն վճ. քոյց կու. ասոնք թէ քրիստոնէական աշակերտութեան մէջ մուտք մեւ. պէն ինչ նշանակեալ. Հարկ է որ խօսինք. աս. մասին, և ճշմարտութիւնը, երեւն. անցնէ:

310. ԽՈՐՀՈՐԴՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ. — Դեռ այդ հարցերուն չմտած, ի դէպ է սահմանել խորհուրդներուն թիւը, ինչպէս որ ներկայիս կը գտնուի ան գտնադան երկիրներու մէջ: Եթէ Ս. Գրքին մէջ թարթափինք, ո՛չ մէկ տեղ պիտի հանգիպինք խորհուրդներու որքանութեան մասին թուային ցուցմունքի, նոյնիսկ պիտի չհանդիպինք անոնց անուններուն՝ մէկ շարքի վրայ իրարու յարաբերաբար յիշատակուած: Միեւնոյնը պարտաւորուած ենք բոլոր Եկեղեցիներու Սուրբ Հայրերուն մասին, թէ՛ արեւելեայց և թէ՛ արեւմտեայց, վասնզի անոնցմէ ոչ մէկը երբեք յիշատակած չէ խորհուրդներուն թիւը, և ոչ ալ անունները ըսեալով թէ այսչափ կամ ասոնք են միայն: Եւ այս՝ ոչ միայն առաջին դարերուն մէջ՝ այլև յետագայ դարերուն, ասանկեղու դարերու երկարատեւ շրջանի մը մէջ: Խորհուրդներուն գոյութիւնը կը յիշատակուի բուն առաջին դարերէն, և այն՝ ոչ լոկ անհոս ճշմարտութեանց կամ աստուածային գաղտնեաց իմաստով, այլ և շնորհաց գործունեայ նշանաց մասնաւոր նշանակութեամբ, ինչպէս ի կիր կ'առնունք հոս դանոնք:

311. ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ. — Հնաւանդ գրութեանց խուզարկու ուսումնասիրողները երբեմն եօթնէն նուազ և երբեմն եօթնէն աւելի կը գտնեն թուուած խորհուրդները: Տերտուլիանոս († 245) խորհուրդ կը համարի միայն Մկրտուութիւնը և Հաղորդութիւնը: Օգոստինոս († 430) տեղ մը յոյժ սովորաբար կ'ըսէ անոնց համար և այլուր միայն երկու խորհուրդ գիտէ, թէ և այլ և այլ անգամներ ալ խորհուրդ կ'անուանէ նաև ձեռնադրութիւնը, ամուսնութիւնը, հոգևորականներու օծումը և. երգմեցուցութիւնը: Ոսկերբան († 407) կը յիշէ Մկրտութիւնը, Դրօշմին և Հաղորդութեան հետ: Դիդիկիսի գրքի մէջ կը յիշատակուին իբր խորհուրդ՝ Մկրտութիւնը, Հաղորդութիւնը Սիւրբութիւնը, ձեռնադրութիւնը և կրօնաւորութիւնը և թաղութիւնը: Դամասկոսի († 754) ըստ վաղեմի և արդարաւան

կարծեաց, միայն երկու գիտէ: Իրեն կը հետեւին եկեղեցական նախնի մատենագիրներէն շատերը: Դամիանոս († 1072) կը թուէ երկատասան Խորհուրդներ, որոնցմէ չորսը Եղիսիպոսականք և հինգը Քահանայականք: Կոդափրիտոս († 1148) կը թուէ ինը Խորհուրդներ, բայց իբրեւ Խորհուրդ կը յիշէ նաև հովուական մատանին և գաւազանը, ջուրը և աղը, ձէթը և Միւռոնը և եկեղեցական ուրիշ ծէսեր: Եկեղեցական Խորհուրդներուն կարգին կը յիշուի այլուր նաև թագաւորներուն օծումը: Իսկ Ամբրոսիոս, Բեռնարդոս և Հելլեներդոս իբր ճշմարիտ Խորհուրդ ճանչցան Ռոմլուան: Աւելի Լատինները յիշեցինք, վասնզի առաջին անգամ անոնցմէ ելաւ Եօթը Խորհուրդներուն թիւը, ու նկատողութեան արժանի է նաև այն որ անոնց մօտ մինչև ժվ. դարու վերջերը դեռ անորոշ կը մնար Խորհուրդներուն թիւը:

312. ԳԱՐԶԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՐԾԻՔՆԵՐ, ԵԾԹՆ ԹԻԻԸ. — Անոնք նոյնիսկ որոնք ջերմաշերմ եռանդով կը պաշտպանեն եօթնեակ թիւը, կը պարտաւորուին խոստովանիլ թէ անոր առաջին յիշատակութիւնը կը գտնուի Պոմբրանիոյ եպիսկոպոս Սաշոնի († 1139) մօտ, և Ս. Վիկտորի Աբբա Հոգոն († 1141), թէև շատեր ևս երկբայական կը գտնեն անոնց մասին տըրգւած վկայութեանց ստուգութիւնը: Բայց անտարակուսելի է թէ եօթը Խորհուրդուներու թիւը աւանդեց և ուսուցց հաստատապէս Պետրոս Լոմբարդոս († 1160), մտկանուանեալն վարդապետ վճռոց, տրեւժուածքի մէջ Դպրոցական Աստուածաբանութեան նախապետը, որուն հետքերուն վրային գացին իր բոլոր աշակերտները և հետևողները, և անրկրայօրէն քարոզեցին թիւն ու անուանիքը Եօթն Խորհուրդներուն, որոնք, ըստ Լոմբարդոսի էին Մկրտութիւն, Հաստատութիւն, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Յետին-օծութիւն, Զեւնադրութիւն և Ամուսնութիւն: Եօթը Խորհուրդներուն համաձայնեալ տուութիւնը առաջին անգամ հիմնուեցաւ դպրոցներուն մէջ, և հետզհետէ անցաւ ժողովական որոշումներու կարգը, արեւ-

մտեայց մէջ, որոնց կարգին հնագոյնն է Լանդինականը (1237) և նշանաւորագոյնն է Փլորենտինոյն (1440) զոր իրենք տիկեբրական կը համարին, և որուն վճիռները Խորհրդոց մասին՝ կը գտնուին յաւնուն Հայոց տրուած (22 նոյ. 1440) հրահանգին մէջ, թէպէտև անոր մէջ շատ բան տարբեր կը բացատրուի քան ինչ որ այժմ կը վարդապետեն Լատինները, և այդ պատճառաւ շատ ճիշդ կը թափն գտնելու համար հրահանգին խօսքերը: Իսկ ինչ որ անկէ վերջ կատարուեցաւ կամ վարդապետուեցաւ արեւմուտքի մէջ, յայտնի է և ստոյգ, միայն թէ շատ չյապաղեցաւ Խորհուրդներու դէմ պայքարը, որուն սկիզբ տաին Վիլիքի († 1384) և Հիաս († 1415) և զոր լրացուցին Լուտեր († 1546) և Կալվին († 1564):

313. ԱՐԵԻՅԵԼԻՔԻ ՄԷՋ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ. — Հակառակ յիշատակեալ պատմական տեղեկութեանց որոնք կը ցուցնեն թէ Եօթը Խորհուրդներուն թիւը և անոնց քրիստոնեայ եկեղեցիներու հաստատուն վարդապետութեանց մէջ մուծուիլը բոլորովին նորութիւն ընէ և եղած, զարմանալի է թէ ինչպէս արեւմուտքի մէջ, և ճիշդ այն դարերուն՝ երբ Հայոց և Յունաց և Լատինաց եկեղեցիները արդէն անջատուած էին իրարմէ՝ կազմուած և տարածուած այս համոզումը՝ մուտ գործեց և հաստատուեցաւ արեւելոյց մէջ ևս, և այնպէս ու այնքան որ սկիզբէն մինչև այսօր ոչ մէկ տարածայնութիւն և մեկ զարդանք չյուզուեցաւ այդ խնդրին մասին անոնց մէջ, ու թէև Խորհուրդին նիւթըրուն, ձեւերուն, պաշտօնականներուն և ծէսերուն համար սաստիկ վճռեալ անգործակալի հակառակութիւններ յուզուեցան միշտ, բայց եօթը թիւին մասին որ, և է խնդր չեղաւ, և արեւելից զարեւելի վեր արեւելոյց և արեւմտեայց մէջ համաձայնօրէն կը պաշտուին Եօթը Խորհուրդները: Առանց մանրամասն վկայութեանց մէջ մտնելու՝ ի հաստատութիւն այս խաղաղական համաձայնութեան, բնական ըլլալ յառաջ բերել յունաց համար կիւրեղ Լուկարոսի գործերը, որ երբ 1621ին Կ. Պոլսոյ պատրիարքական ա-

Թողը բազմեցաւ, ուղեց հաստատել համաձայն Լուսերականաց, որոնց մօտ ուստում առած էր ի սկզբան, միայն երկու խորհուրդներ, բայց իրեններէն հակառակութեան հանգիսելով՝ եօթնիցս վտարուեցաւ աթոռէն, ու միշտ վերադարձաւ, բայց ի վերջոյ մեռաւ խեղդամահ (1638) և դատապարտուեցաւ իր կարծիքը, իսկ եօթը խորհուրդներու վարդապետութիւնը հաստատուեցաւ իր յաջորդէն, Կիւրեղ Կանդարիոնէն (1639), Պարթէնիոսէն (1642) և Պոլսոյ ապա երուսաղէմի (1672) մեծ ժողովին մէջ։ Ու մինչև այսօր բոլոր Օրթոտոքս եկեղեցիները կը պահեն եօթը թիւը խորհուրդներուն։

314. ՄԵՐԻՆՆԵՐՈՒՆ ԿԱՐՄԻՔԸ. — Իսկ մերիներէն թէև ոչ մէկ տեղ և ոչ քառանդած է խորհուրդներուն անունները և թիւը, Գր. Տաթևացի միայն († 1420) Հարցմանց գրքին մէջ բացայայտ խօսքերով կը թուէ խորհուրդները այսպէս. «Նախ՝ Միգրտութիւն, երկրորդ՝ Դրոշմ, երրորդ՝ Հաղորդութիւն, չորրորդ՝ Ապաշխարութիւն, հինգերորդ՝ վերջին Օծում, վեցերորդ՝ Կարգ Քահանայութեան, եօթներորդ՝ Պատկն» (Գլ. ԼԳ., պրակ ԻԸ.) և կը յարէ նոյնիսկ եռատեսակ պատճառներ ի հաստատութիւն և ի յորմարութիւն եօթնեակ թիւին, նման պատճառաբանութեանց զորս ի կիր կ'առնուն արեւմուտքի Դպրոցականները իրենց գիրքերուն մէջ, և որոնք առհասարակ վարդապետութիւններն են Դոմինիկեան Ուխտին, որոնցմէ սերեցան նաև մեր երկրին մէջ գործող անխիթող վարդապետները, Անկէ ի վեր ուն հինգ դարեր անցած են և նոյն վարդապետութիւնը կը պահուի մեր եկեղեցական գրականութեան և պաշ-

տամանց մէջ, ու վերջին Օծման խորհուրդին խափանման սովորութիւնը մեկնաբանական ճիշդութեամբ կ'էմբրիոնները՝ պարզապէս թիւը պահած ըլլալու մտածումով։ Պէտք է դիտել նաև թէ Տաթևացիին գրութեան ժամանակը Կանխադրյալ ըլլալով քան Փլուրենդեան ժողովը, հարկ է ընդունիլ թէ ոչ թէ ի յարգանս այդ ժողովին որոշումներուն, այլ պարզապէս ինքնաբերական տրամադրութեամբ է որ մերիներէն ընդունած են հետեւիլ այդ մօտին Կաթոլիկ սովորութեան, որդեգրելով եօթը խորհուրդներուն թիւը, շարքը և յորջորջանքը։

315. ԱՐԵՒՄՏԱՅԹ ՓԱՍՅԸ. — Այդ իսկ է հօգորդոյն փաստը զոր Հռովմէական եկեղեցւոյ յայժմեան վարդապետները յառաջ կը բերեն իրենցմէ բաժնուած նորադանդներուն դէմ, եթէ՛ կ'ըսեն, եօթը խորհուրդներու թիւի և անուններու այդ վարդապետութիւնը, որ արդարեւ յայժմ անպահ աւանդուած է մեկին և յստակ խօսքերով, ինքնին Քրիստոսի եկեղեցիին հնաւանդ և ընդհանուր Դաւանութիւնը եղած չըլլալ, այնքան համաձայնութեամբ պիտի չընդունուէր արեւելեան եկեղեցիներէն ալ՝ այլ պիտի մերժուէր իբրեւ Լատինականէն նոր ի նորոյ հնարուած դրութիւն մը։ Ու արդարեւ, կարելի չէ աւելի կերպով մեկնել այդ տարածած և անակնկալ և կարծեա անհաւատալի համաձայնութիւնը, եթէ ոչ ենթադրելով թէ կարի հաստատուն էր արդէն իւրաքանչիւր եկեղեցիի մէջ առանձնաբար, և բազմապիսեան եկեղեցիին մէջ ընդհանրապէս նոյն խորհուրդներուն կիրառութիւնը և անոնց վերաբերմամբ կազմուած ներքին համոզումը։

(Շարունակելի՝ 31)

ՄԱՀԱԳԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ